ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Լուսապսակ Խմբագրություն ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/60 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը
2	Կախարդական բանալի	Սույն ամսագիրը նախատեսվում է կրտսեր դպրոցական տարիքի երեխաների համար։ Բովանդակային չափանիշներ. ամսագիրը պետք է ներառի՝ • լեզվական գրագիտությունն ու կարողունակությունը զարգացնող նյութեր, • սովորելու կարողունակությանն ուղղված նյութեր, • ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակությանն ուղղված նյութեր, • թվային և մեդիա կարողունակությանն ուղղված նյութեր, • մշակութային կարողունակությանն ուղղված նյութեր, • մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակությանն ուղղված նյութեր, • տնտեսական կարողունակությանն ուղղված նյութեր։ Ամսագիրը նպաստում է ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի թիվ 136-Ն որոշմամբ հաստատված Հավելված 2-ի 3-րդ գլխով սահմանված վերջնարդյունքների ապահովմանը։ Կառուցվածքային չափանիշներ. • ամսագրի յուրաքանչյուր համարում էջերը պետք է բաժանված լինեն 4 առանձին խորագրերի, • ընդգրկված նյութերի շարադրանքը և ներկայացման ձևը պետք է համապատասխանի այն տարիքային խմբի սովորողների ընկալումներին, ում համար նախատեսված է տվյալ ամսագիրը, • ամսագրերում զետեղված նյութերը, որպես կանոն, չպետք է կրկնեն դասագրքերում և ուսումնական ձեռնարկներում ընդգրկված նյութերի բովանդակությունը, այն պետք է լրացնի նախատեսված բովանդակությունը՝ մեկնաբանված այլ

		մեթոդաբանությամբ, • ամսագրերը պետք է նպաստեն երեխաների՝ միմյանց հետ հաղորդակցվելուն, • ամսագրերը պետք է ունենան կրթական գործընթացին, երեխաների ստեղծագործական մտքին, նախասիրություններին ինչպես նաև սոցիալ-բարոյական ուղղվածությանը աջակցող բաղադրիչ, • ծնողները ևս կարող են հանդես գալ, որպես հոդվածագիրներ: Տեխնիկական չափանիշներ. • մամուլը՝ 2 տ/մ, • չափսը՝ 60/80, 1/8, • կազմը՝ կավճապատ, գունավոր (չորս և ավելի), 115 գր., • թուղթը՝ ոչ կավճապատ, • տպագրությունը՝ գունավոր (չորս և ավելի), 70 գր., • պարբերականը՝ ընդհանուր 2 համար, որից յուրաքանչյուրը՝ 2084 տպաքանակով, • կրտսեր տարիքի երեխաների համար նախատեսված ամսագրերի տպագրական որակը պետք է համապատասխանի՝ ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի թիվ 71-Ն որոշման Հավելված թիվ 2-ի 3-րդ կետով ամրագրված և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 14-ի թիվ 2 Հայաստանի Հանրապետությունում Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերը գործողության մեջ դնելու մասին կարգով գործողության մեջ դրված Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 797 որոշմամբ ընդունված Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանքի անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 007/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ-ի պահանջներին, • ամսագրերը պետք է ունենան անվանում, • ելքային տեղեկություններ՝ տպագրվող ամսագրերի հրատարակչական որակը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետությունում գործող ГОСТ 4.482-87 Издания книжные и журналные. Издательско-полиграфическое оформление и полиграфическое исполнение պետական ստանդարտներին, • հատուկ նշագրում՝ ամսագրերի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ Վաճառքի ենթակա չէ բառերը, • ամսագրերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված և հայերեն լեզվով, • ամսագրերում ընդգրկված նյութերի 70 % պետք է լինեն հեղինակային, • ամսագրում ընդգրկված նյութերում առկա տեղեկություններն ու փաստերը պետք է լինեն հավաստի, ստուգելի և ունենան աղբյուրների հղումներ, • պատրաստի նյութը տպագրության հանձնելուց առնվազն 15 աշխատանքային օր առաջ անհրաժեշտ է փաթեթի նմուշ-օրինակը տրամադրել պատվիրատուին՝ առկա նյութերի բովանդակության հաստատման նպատակով: Ամսագրերի նյութերը պետք է լինեն առանց ուղղագրական, ոճական, իմաստային և նմանատիպ սխալների:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Лусапсак Редакция ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/60 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	товарный знак	технические характеристики
2		